ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ներկա ստորագրյալ Հայաստանեայց Եկեղեցվո եպիսկոպոսներս, որ ուխտի եկած ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ մասնակցելու մեր սիրելեցյալ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի 30-ամյա գահակալության հոբելյանի հանդիսությանց, սրտագին կաղոթենք, որ Տերը քաջառողջություն և մշտանորոգ եռանդ պարգևե Անոր, որպեսզի երկար տարիներ ջանք ունակե Իր հոգեշեն ու հայրենանվեր գործունեությունը ի պայծառություն մեր Մայր Եկեղեցվո և մեր հավատացյալ ժողովուրդին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Այս երջանիկ առիթով Վեհափառ Հայրապետին կներկայացնենք նաև մեր երախտագիտությունը Անոր անխոնջ աշխատանքին համար երեսուն տարիներու ընթացքին՝ ի պայծառություն աշխարհի խաղաղության և ազգություններու համերաշխության աստվածահաճո դատին:

Մենք ևս այսօր կաղոթենք ջերմապես, որ Փրկիչը մեր Քրիստոս Իր խաղաղարար շունչը իջեցնե համայն աշխարհի վրա, որպեսզի պետությունները բոլոր Արևմուտքի և Արևելքի, միացյալ ճիգերով ամրապես հաստատեն խաղաղությունը մեր երկրագունդի վրա և տիեզերքի մեջ, իրականացնելով ընդհանուր վինաթափումը, որ արդար սպասումն է համայն մարդկության և նվիրական պատգամը Քրիստոսի Սուրբ Ավետարանին:

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն». ամեն:

1) ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
2) Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ — Ս. Էջմիածին
3) Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ — Նյու Յորք
4) Տ. ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ — Ս. Էջմիածին
5) Տ. ԳՆԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ — Պեյրութ
6) Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ — Բուխարեստ
7) Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ — Գահիրե
8) Տ. ՎԱՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ — Լոս Անճելըս
9) Տ. ՀԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Մարսեյլ
10) Տ. ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Փարիզ
11) Տ. ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Լենինական
12) Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Թբիլիսի
13) Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Ս. Էջմիածին
14) Տ. ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Լոնտոն
15) Տ. ՈՍԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Դամասկոս
16) Տ. ԱՂԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Սիտնեյ
17) Տ. ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Լիոն
18) Տ. ԱՎԱԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Պաղտատ
19) Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Պուենոս Այրես
20) Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Երևան
21) Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Բաքու
22) Տ. ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Մոնրեալ
23) Տ. ՏԱԹԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Սան Փաուլո
24) Տ. ՄԵՍՐՈՊ ԾԱՅՐ. ՎԱՐԴԱՊԵՏ — Վիեննա

Հոկտեմբերի 3-ին հյուրերը հրաժեշտ տվեցին Նորին Սրբությանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: